ՅՈԲԵԼԵԱՆՆԵՐ

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ՍՈՒՐԲ ԵՐԿՐՈՒՄ

(100-ամեակի առթիւ)

Արեւմտեան Թուրքիայի Քէօթահիա քաղաքը եղել է հայկական խեցեգործութեան կենտրոններից։ Հայ խեցեգործներն այնտեղ մեծապէս նպաստել են այդ արուեստի զարգացմանն ու տարածմանը։ Դեռեւս 17-րդ դարում հայ բարեպաշտ խեցեգործներն իրենց պատրաստած երեսպատման սալիկներից նուիրել են Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեանը։ Միաբան հայրերը դրանցով երեսպատել են Սուրբ Յարութեան տաճարի հայկական բաժինը, Սրբոց Յակոբեանց մայր եկեղեցին, Սրբոց Հրեշտակապետաց եւ Սուրբ Փկրչի վանքերի եկեղեցիները։ Սուրբ Թէոդորոս (Թորոս) եկեղեցին նոյնպէս երեսապատուած է Քէօթահիայի հայ վարպետների պատրաստած անկրկնելի սալիկներով[1]։

Մինչեւ Հայոց ցեղասպանութիւնը քաղաքում ապրող հայերի մի մասի զբաղմունքը խեցեգործութիւնն էր։ Կային ընտանիքներ, որոնք այդ գործով զբաղւում էին սերնդէ-սերունդ։ 14-րդ դարից սկսած՝ հայ խեցեգործների պատրաստած սալիկներով Օսմանեան կայսրութեան տարածքում երեսպատուել են բազմաթիւ եկեղեցիների, մզկիթների եւ հանրային այլ շինութիւնների պատեր[2]։

Բացի երեսպատման սալիկներից՝ հայ վարպետները պատրաստում էին նաեւ ամենօրեայ օգտագործման սպասք եւ կենցաղային այլ առարկաներ, որոնք զարդարում էին ոչ միայն սուլթանների, այլեւ Եւրոպայի թագաւորական եւ իշխանական տների սեղանները։ Նրանք պատրաստում էին նաեւ եկեղեցական սպասք։

1919 թ. հայ խեցեգործները հիմնաւորապէս հաստատուել են Երուսաղէմում։

Սուրբ Երկրի՝ Օսմանեան կայսրութեան տիրապետութիւնից ազատագրուելուց յետոյ բրիտանացիներն սկսել են մեծ ուշադրութիւն դարձնել տեղի կրօնական, պատմական եւ մշակութային յուշարձանների պահպանմանը։ Այդ շրջանում առաւել հրատապ նորոգման կարիք ունէր կրօնական կարեւոր սրբավայր եւ յուշարձան համարուող Ժայռագմբէթը[3], որի առաստաղի՝ 16-րդ դարի սալիկներն սկսել էին թափուել։ Դրանք ամրացնելու եւ վերանորոգման աշխատանքներ կատարելու հա-

---

[1] **Carswell J.and Dowsett C. J. F.,** Kutahya Tiles and Pottery from the Armenian Cathedral of St. James, Jerusalem, Vol. I. (Oxford: Clarendon Press, 1972), 8–9.

[2] **Kenaan-Kedar N.,** The Armenian Ceramics of Jerusalem: Three Generations, 1919–2003(Jerusalem: Yad Izhak Ben-Zvi, 2003), 17.

[3] **Ժայռագմբէթ** – Dome of the Rock, այս սրբավայրը մահմեդական աշխարհում իր կարեւորութեամբ երրորդն է՝ Մեքքայից ու Մեդինայից յետոյ, որտեղից, ըստ մահմեդական աւանդութեան, համբարձուել է Մուհամմեդը։ Այս ժայռի վրայ պէտք է տեղի ունենար Աբրահամի որդի Իսմայէլի (իսկ ըստ Հին Կտակարանի՝ Իսահակի) զոհաբերութիւնը Աստծուն։

մար Քէօթահիայից հրաւիրւում է յայտնի խեցեգործ Դաւիթ Օհաննէսեանը։ Տեղում կատարուելիք աշխատանքն ուսումնասիրելուց յետոյ նա վերադառնում է Քէօթահիա, ձեռք բերում անհրաժեշտ նիւթեր եւ, իր հետ վերցնելով յայտնի խեցեգործներ Նշան Պալեանին ու Մկրտիչ Քարագաշեանին, վերադառնում է Երուսաղէմ։ Ժայռագմբէթի հարեւանութեամբ նրանք բացում են իրենց արհեստանոցը եւ պատրաստւում վերանորգման աշխատանքներին։ Սակայն ֆինանսների չգոյութեան պատճառով Ժայռագմբէթի առաստաղը չի վերանորոգւում։

Հայոց ցեղասպանութիւնից յետոյ հայ խեցեգործները չեն ցանկանում վերադառնալ Քէօթահիա։ Բրիտանացի կառավարիչ Ռոնալդ Սթորսի օգնութեամբ Օհաննէսեանն իր երկու ընկերների հետ Խաչի ճանապարհ փողոցում բացում է «Ժայռագմբէթի սալիկներ» (“The Tiles of the Dome of the Rock”) կոչուող իր արհեստանոցը, որտեղ Նշան Պալեանն աշխատում է որպէս կաւագործ, իսկ Մկրտիչ Քարաքաշեանը՝ որպէս նկարող։

1922 թ., առանձնանալով Օհաննէսեանից, Պալեանը եւ Քարաքաշեանը Նապլուս փողոցում բացում են «Պաղեստինեան խեցեգործարան» (“Palestine Pottery”) կոչուող իրենց միացեալ արհեստանոցը։

1948 թ. արաբա-իսրայէլական պատերազմի պատճառով Դաւիթ Օհաննէսեանը հեռանում է Երուսաղէմից եւ չորս տարի անց մահանում։ Պալեան եւ Քարաքաշեան ընտանիքները մնում են Երուսաղէմում եւ շարունակում զբաղուել իրենց արհեստով։ 1964 թ. Ստեփան եւ Պերճ Քարաքաշեան եղբայրներն առանձնանում են Պալեան ընտանիքից եւ Հին քաղաքի Խաչի ճանապարհ փողոցում բացում իրենց առանձին արհեստանոցը։

Քարաքաշեան եղբայրների առաջին կարեւոր պատուիրատուն Յորդանանի կառավարութիւնն էր[4]։ Նրանց պատուիրում են պատրաստել Հին քաղաքի բոլոր փողոցների անուանումների անգլերէն ու արաբերէն երկլեզու ցուցանակները։ Եղբայրներն այս մեծածաւալ պատուերը կատարում են ժամանակին եւ պատուով։ 1967 թ. իսրայէլական բանակի՝ Հին քաղաքը եւ Արեւելեան Երուսաղէմը գրաւելուց մէկ տարի անց քաղաքապետարանի հրեայ պաշտօնեաները Քարաքաշեան եղբայրներին պատուիրում են պատրաստել փողոցների անուանումների եբրայերէն ցուցանակները եւ աւելացնում են արդէն գոյութիւն ունեցող երկլեզու ցուցանակներին։ Հին քաղաքի փողոցներում մինչ օրս կարելի է տեսնել նրանց աշխատանքը։

Պալեան ընտանիքի ամենաարժէքաւոր նուէրը Երուսաղէմ քաղաքին Մարի Պալեանի՝ 1000 սալիկից պատրաստած «Դրախտային ակնարկ» (4 մ x 6 մ) խճանկարն է, որն այժմ զարդարում է Երուսաղէմի Քորէշ փողոցի Դուրեանաշէն վանքապատկան շէնքի արտաքին պատը։ Բացման արարողութիւնը տեղի է ունեցել 2004 թ. Նոյեմբերի 29-ին, որին մասնակցել են նաեւ Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանը (1990–2012), Երուսաղէմի քաղաքապետը եւ Իսրայէլի զբօսաշրջութեան նախարարը։ Իր խօսքում Սրբազան Հայրը մասնաւորաբար նշել է. «Պալեան ընտանիքը 1915 թ. սոսկալի եղեռնի վերապրողներէն են, որոնք 1919 թ. Օհաննէսեան եւ Քարաքաշեան ընտանիքներու հետ կը հաստատուին Երուսաղէմ՝ հրաւիրուած ըլլալով վերանորոգելու Dome of the Rock մզկիթի առաստաղի սալիկները։ Երուսաղէմ հաստատուելով, փաստօրէն, անոնք կը հանդիսանան խեցեգործութեան արուեստը այս երկիր ներմուծողները»[5]։

Պալեան եւ Քարաքաշեան ընտանիքների հետ տասնամեակներ շարունակ

---

[4] 1948–1967 թթ. Երուսաղէմի Հին քաղաքը եւ Արեւմտեան հատուածը Յորդանանի թագաւորութեան տիրապետութեան տակ էին։

[5] «**Սիոն**», 2005, թիւ 1-3, էջ 93։

աշխատած բազմաթիւ սաղիմահայեր, սովորելով խեցեգործութեան գաղտնիքները, Երուսաղէմում բացել են առանձին արհեստանոցներ եւ ցայսօր զբաղւում են այդ արուեստով։ Նրանցից յիշատակութեան արժանի են Սանտրունի եղբայրները, Վիգէն Լէփէճեանը, Յակոբ Անդրէասեանը եւ Արմանդարեանը։ Աներկբայ կարելի է ասել, որ նրանք, Բալեան եւ Քարաքաշեան ընտանիքների հետ շարունակում են խեցեգործութեան հայկական արուեստի աւանդոյթները Սուրբ Երկրում։

Հայկական խեցեգործութեան արուեստն այլեւս դարձել է Երուսաղէմի մշակութային կեանքի անբաժանելի մաս, Սուրբ Երկրում հայ ժողովրդի իւրօրինակ այցեքարտ։ Այդ է, թերեւս, պատճառը, որ "Jerusalem Post" *օրաթերթում 2019 թ. Փետրուարի 6-ին տպագրուած յօդուածի հեղինակն Իսրայէլի կառավարութեանն առաջարկել է դիմել ՅՈՒՆԷՍԿՕ-ին՝ Երուսաղէմի հայկական խեցեգործութիւնը գրանցելու համար մարդկութեան ոչ նիւթական մշակութային ժառանգութեան ներկայացուցչական ցանկում*[6]*։*

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Յաջողութիւնը չի փոխեր, այլ կը բացայայտէ մարդոց։

Երբ դրացիդ կը կորսնցնէ աշխատանքը, այդ անկում է, երբ դուն կը կորսնցնես աշխատանքդ, այդ պարզապէս ճգնաժամ է։

Յուցումով ըրած բարութիւնն ամենեւին ալ բարութիւն չէ։

Երիտասարդութիւնը... շուտ անցնող հիւանդութիւն է։

Համեստութիւնը չլսուած որակ մըն է, եթէ, ի հարկէ, արդէն հանրայայտ ես։

Հոսկէ-հոնկէ զրուցելու համար առանձնապէս գիտելիքներ պէտք չեն։

Բացատրութիւնն աւելի յաճախ արդարացում կը յիշեցնէ։

Յաջողութեան գաղտնիքի մասին առաւել համոզիչ դատողութիւններ կ՚ընեն անյաջողակները։

Քառասունը երիտասարդութեան ծերութիւնն է, յիսունը՝ ծերութեան երիտասարդութիւնը։

[6] **Nudell E.,** "Israel Should Claim its 'Intangible Cultural Heritage' at UNESCO", Jerusalem Post, February 6, 2019.